«ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
Էլ.փոստ՝ gurgengrigoryan@developers.am info@developers.am
Հեռախոս՝ +374 (98) 513233 +374 (44) 001099
ՀՎՀՀ՝ 00261153, պետական գրանցման համարը՝ 211.171.05492 / 2010-10-14
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ծիծեռնակաբերդի խճղ., շ 8/3, 0082

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10 դեկտեմբերի 2024 թ. ՀՀ, ք. Երևան

«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա) կառուցապատման և քաղաքաշինության ոլորտային խնդիրներ բարձրաձայնող և դրանց լուծումներին օժանդակող մասնագիտական կառույց է, որը կամավոր անդամության հիման վրա միավորում է կառուցապատողներին և համախմբում նրանց մեկ հարթակի ներքո:

Ասոցիացիայի կառուցվածքն է՝

- Բարձրագույն մարմինը անդամների ընդհանուր ժողովն է, որը սույն հաշվետվությունը ներկայացնելու ամսաթվի դրությամբ կազմված է 49 անդամ կառուցապատողներից,
- Կոլեգիալ կառավարման մարմինը Խորհուրդն է, որին ընտրում են անդամները: Սույն հաշվետվությունը ներկայացնելու ամսաթվին նախատեսվում է ձևավորել Խորհրդի նոր կազմ՝ կանոնադրությամբ սահմանված կարգով,
- Գործադիր մարմինը Նախագահն է, որին ընտրում և պաշտոնից ազատում է Խորհուրդը՝ կանոնադրությամբ սահմանված կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Համագործակցություն

1.1) Շարունակել ենք ակտիվ գործընկերային հարաբերությունները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ներպետական և միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝

- «Կառուցապատման ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված» միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համակարգմամբ մասնակցել ենք բազմաթիվ քննարկումների, ներկայացրել ոլորտի թե՛ օրենսդրական և թե՛ վարչարարության խնդիրները՝ ներգրավվելով դրանց կարգավորումների մշակման գործընթացում: Աշխատանքային խմբում ընդգրկված են

ինչպես Ասոցիացիայի, այնպես էլ կառուցապատման ոլորտին հարաբերվող պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեում ունեցել ենք բազմաթիվ հանդիպում-քննարկումներ, ներկայացրել քաղաքաշինության ոլորտի նորմատիվային բազայի արդիականացման ուղղությամբ առաջարկներ, մասնակցել դրանց բարելավման և պրակտիկ կիրառելիության գործընթացին:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից գործող քաղաքաշինական խորհրդի և գիտամեթոդական հանձնաժողովի շրջանակներում ունեցել ենք քննարկումներ ոլորտային խնդիրների վերաբերյալ, մասնակցել նշված մարմիններում առաջադրված խնդիրների լուծումների ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև ներկայացրել քաղաքաշինական բնույթի հարցերում կառուցապատողների օրինական շահերը և իրավունքները:
- Ընդգրկվել ենք Քաղաքաշինության բնագավառում հավաստագրման ենթակա մասնագետների որակավորման և քաղաքաշինական փաստաթղթերի լիցենզավորման նոր գործընթացի կազմակերպման նպատակով ձևավորված հանձնաժողովների կազմերում:
- Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի շրջանակներում իրականացրել ենք քննարկումներ ՀՀ օրենսդրության փոփոխությունների, առաջադրվող նախագծերի շուրջ, այդ թվում՝ ՀՀ հարկային օրենսգրքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, բիզնեսին վերաբերող այլ օրենքների ու իրավական ակտերի վերաբերյալ, բարձրացրել կառուցապատողներին հուզող հարցեր, առաջադրել դրանց ուղղությամբ լուծումներ:
- Եկամուտների քաղաքականության կատարելագործման ընդլայնված խորհրդի շրջանակներում ունեցել ենք հանդիպում-քննարկումներ, ներկայացրել կառուցապատողների կողմից բարձրացված հարցեր:
- Ընդգրկվել ենք Դատական և իրավական բարեփոխումների մշտադիտարկում իրականացնող հանձնաժողովում՝ որպես անդամ, որի շրջանակներում ներկայացրել ենք կառուցապատողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ առաջարկներ:
- Պետություն-Ասոցիացիա համագործակցության արդյունքում հաջողությամբ մեկնարկվել և Ասոցիացիայի 2 անդամ կազմակերպությունների կողմից իրականացվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում Ասիամեգաստոոյ ՍՊԸ-ի կողմից ձախողված քաղաքաշինական ծրագրի առողջացումը՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիման վրա:
- Ընտրվել ենք Գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ:
- Մասնակցել ենք ՀՀ ազգային ժողովում կազմակերպված մի շարք քննարկումների՝ տեղական տուրքերի, վճարների, հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ թեմաներով:
- Մասնակցել ենք կառուցապատողներ-համայնք նոր իրավական կարգավորումների վերաբերյալ քննարկումներին, այդ թվում՝ փոշու և աղմուկի կանոնակարգման, տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերի մեղմման և այլ օրակարգերով:
- Կառուցապատման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ ունեցել ենք քննարկումներ Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

- Կառուցապատման ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով ունեցել ենք հանդիպում-քննարկումներ Իրանի առևտրարդյունաբերական պալատի, Եգիպտոսի դեսպանի, օտարերկրյա այլ բիզնես ասոցիացիաների ներկայացուցիչների հետ, խորացրել ենք գործարար կապերն ու հարաբերությունները Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ/IFC) հետ:

1.2) Շարունակել և է՛լ ավելի ենք խորացրել մեր ակտիվ համագործակցությունը՝
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության,
- ՀՀ ֆինանսների նախարարության,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի,
- ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ,
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող կառույցների հետ:

1.3) Շարունակել ենք արդյունավետ համագործակցությունը գործընկեր կազմակերպությունների և մարմինների հետ, այդ թվում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, Ճարտարապետների պալատի, Շինարարների միության, Նոտարական պալատի, Մանթաշյանց գործարարների միության հետ՝ կնքված համագործակցության հուշագրերի և գործընկերության շրջանակներում, կնքել ենք համագործակցության նոր հուշագրեր, այդ թվում՝ Բանկերի միության, Հաշվապահների ասոցիացիայի, Ռիելթորների ասոցիացիայի, Բիգ Փրոջեքթսի, Վրաստանի անշարժ գույքի ազգային ասոցիացիայի հետ:

1.4) Որպես «ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ՝ նպաստել ենք կենտրոնի գործունեության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, արբիտրաժի՝ որպես կառուցապատման ոլորտում առաջացող վեճերի առավել արդյունավետ լուծման կառուցակարգի ներդրմանը: Մեր խորհրդատվական կարծիքի հիման վրա ներգրավվել են կառուցապատման ոլորտի վեճեր քննող արբիտրներ:

1.5) Ունեցել ենք շարունակական քննարկումներ մատակարար կազմակերպությունների՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ՝ կառուցապատողներին վերաբերող հիմնական խնդիրների մասով, այդ թվում՝ ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների տրամադրման գործընթացների պարզեցման վերաբերյալ:

1.6) Աջակցել ենք անդամ կառուցապատողներ-ՀԷՑ հարաբերությունների լավարկմանը, որի արդյունքում մի շարք կառուցապատողներ կնքել են միացման պայմանագրեր՝ մինչև 2023 թվականի ապրիլի 01-ը գործած սակագներով:

1.7) Մասնակցել ենք մի շարք հանդիպում-քննարկումների, կառուցապատման ոլորտի արդի խնդիրներին, օրենսդրության բարելավմանը, կառուցապատողների միջև հարաբերությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝

- TOON EXPO 2023, 2024
- Ռեալ բիզնես կոնֆերանս,
- ՀՀ ԱԺ-ում կայացած քննարկումներ,
- Շինարարական կլիմայաբանություն շինարարական նորմերի վերաբերյալ աշխատաժողով,
- Հայ-էմիրաթական գործարար համաժողով,
- Թողարկողների և վարկանիշավորողների պետական աջակցության ծրագրի վերաբերյալ միջոցառում,
- ՀՀ անշարժ գույքի շուկայի միջազգայնացմանն ուղղված կոնֆերանս,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Ասոցիացիայի կողմից համատեղ կազմակերպված ՀՀ քաղաքաշինության ոլորտի խնդիրների ու դրանց լուծումների վերաբերյալ արտագնա աշխատաժողով և այլն:

2. Օրենսդրական փոփոխություններ և վարչարարություն

2.1) ՀՀ ազգային ժողովի, ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի ու մյուս կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներում ներկայացրել ենք ոլորտային խնդիրները, մեր նկատառումները, առաջարկություններն ու կարծիքները, այդ թվում՝ ստորև նշված հարցերի վերաբերյալ.

- Կառուցապատման ոլորտի թույլտվությունների ստացման գործընթացի վարչարարություն և օրենսդրության պարզեցում,
- ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 596-Ն որոշման փոփոխություններ, որոնց էական մասը ընդունվել է,
- Բազմաբնակարան շենքերի պահպանման և կառավարման օրենսդրության բարելավում,
- Բազմաբնակարան շենքերի՝
    - էլեկտրաէներգիայի բաշխման ցանցին միացման վճարների էական բարձրացման և էլեկտրակայանքների օտարման խնդիրներ,
    - Գազամատակարարման խնդիրներ,
    - Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի ու դրանց գծով տեխնիկական պայմանների տրամադրման, ռեզերվուարների սպասարկման և պոմպակայանները պետությանը հանձնելու գործընթացի պարզեցում,
- Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերում նախատեսվող փոփոխություններ, այդ թվում՝ արտասահմանյան երկրների նորմատիվային բազան ՀՀ-ում տեղայնացնելու և ճանաչելիության շուրջ իրավակարգավորումներ,

- Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող դրամական միջոցների ապասառեցման սահմանափակումների վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություն,
- Ավելացված արժեքի հարկի վերաբերյալ նոր կարգավորումներ նախագծի փոփոխություններ,
- ՀՀ քրեական օրենսգրքում խրախուսական նորմերի չեղարկման նախագծի փոփոխություններ:

2.2) Մշակել ենք բազմաբնակարան շենքերի պահպանման և կառավարման մասին օրենքի փոփոխությունների հայեցակարգ, որը ներկայացրել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեին, իրականացնում ենք քննարկումների շարք՝ նպատակ ունենալով ներառել մեր առաջարկները ակնկալվող օրենսդրական նախաձեռնության շրջանակներում:

2.3) Մշակել ենք Կառուցապատման գործունեության մասին ՀՀ օրենքի հայեցակարգ, այն ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ քննարկման:

2.4) Մշակել ենք ապարտհոթելների շուրջ իրավակարգավորումների վերաբերյալ հայեցակարգ, ապարտհոթելների՝ որպես հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ նոր իրավական կարգավորումներ, որի և զբոսաշրջության ոլորտի օրենսդրության լավարկմանն ուղղված մեր առաջարկների հիման վրա ընդունվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի սեպտեմբերի 01-ից, այժմ մշակման փուլում է գտնվում օրենքից բխող այլ իրավական ակտերի ստեղծման կամ գործող իրավական ակտերում փոփոխությունների փաթեթը:

2.5) Երևան համայնքի ավագանու կողմից ընդունված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի կարգավորումների բարելավման վերաբերյալ ներկայացրել ենք առաջարկներ, որոնց մի մասն ընդունվել է:

2.6) Ներգրավվել և մեր առաջարկներն ենք ներկայացրել նաև մի շարք այլ օրենսդրական ակտերի, այդ թվում՝ «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 592 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ նոր օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, ՀՀ հարկային օրենսգրքի, «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ»-ի և այլ իրավական ակտերի վերաբերյալ:

2.7) «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ամենշաբաթյա կտրվածքով Ասոցիացիայի անդամներին է ներկայացվել նախատեսվող և ոլորտային հետաքրքրություն ներկայացնող օրենսդրական փոփոխությունների, շրջանառվող նախագծերի, նոր ընդունված կամ ուժի մեջ մտած իրավական ակտերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ նպատակ ունենալով ապահովելու բիզնեսին վերաբերող իրավակարգավորումների մասով իրազեկման առավել արդյունավետ հնարավորություններ:

2.8) Վարչարարության բարելավման և գործընթացների պարզեցման նպատակով ներկայացրել ենք բազմաթիվ առաջարկներ, սակայն ժամկետների ձգձգումները ու դրանով պայմանավորված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

3. ՍԿՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ ԱՆԵԼԻՔՆԵՐ

3.1) Մշակել ենք Հայաստանի Հանրապետությունում կառուցվող բնակելի շենքերի և դրանց նախագծերի, կառուցապատողների ռեյտինգավորման՝ դասակարգման որոշման/հաշվարկման գործընթաց, որի շրջանակներում իրականացվելու է կառուցապատողների կողմից կառուցվող բնակելի շենքերի գնահատում և սերտիֆիկացում, ստուգվելու է նրանց կողմից ներկայացված նախագծերի և շենքերի համապատասխանությունը նախապես սահմանված չափանիշներին և տրամադրվելու է կառուցապատողի և նախագծի կամ շենքի համապատասխան դասի սերտիֆիկատ: Ընթացակարգը ներկայացրել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ քննարկման:

3.2) Մշակել ենք Կառուցապատողների գործունեության մասին օրենքի հայեցակարգը, այն ներկայացրել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեին: Հայեցակարգի հավանություն ստանալուց հետո նախատեսվում է մեկնարկել օրենքի մշակման աշխատանքները: Հայեցակարգը և ապագա օրենքը կարգավորելու են կառուցապատողներին առաջադրվող չափանիշները, սահմանելու են փոխհարաբերությունների սկզբունքները և ոլորտային անհրաժեշտ այլ կարգավորումները:

3.3) Մշակել ու ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ենք ներկայացրել նաև.

- ռենովացիայի հայեցակարգի վերաբերյալ մեր առաջարկները, դրանց իրականացման ուղությամբ շարունակելու ենք մեկնարկված աշխատանքները,
- դպրոցաշինության քաղաքաշինական ծրագրերի վերաբերյալ մեր առաջարկները, դրանց իրականացման ուղությամբ շարունակելու ենք մեկնարկված աշխատանքները,

- քաղաքաշինական նորմերի (այդ թվում՝ հրդեհային անվտանգության և սեյսմիկ նորմեր) բերալավման ուղղությամբ մեր առաջարկները:

3.4) Գործողության մեջ է դրվել Ասոցիացիայի կայքէջը, որտեղ տեղ են գտել նաև Ասոցիացիայի անդամների, նրանց կողմից իրականացվող ծրագրերի, գործընկերների մասին տեղեկություններ, Ասոցիացիայի գործունեության հիմքերը կանոնակարգող իրավական ակտերը:

3.5) Ներկայումս մշակման փուլում է գտնվում Ասոցիացիայի կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության ծրագիրը, որն ուղղված է Ասոցիացիայի, անդամների ու գործընկերների գործունեության առավել արդյունավետ լուսաբանմանը, և Ասոցիացիայի ներգրավմամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը:

3.6) Պետություն-մասնավոր համագործակցությամբ նախաձեռնել ենք ճանաչողական այցեր՝ Ասոցիացիայի անդամ կառուցապատողների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի շինարարական հրապարակներ՝ ծանոթանալու շինարարական աշխատանքների կազմակերպման գործընթացներին, իրականացնելու փորձի փոխանակումներ, որը լինելու է շարունակական:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023-2024

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ	01.01.2023-31.12.2023թ.
Մուտք (ՀՀ դրամ)	29,899,979
Ասոցիացիայի Խորհրդի անդամների կողմից վճարված գումար (ՀՀ դրամ)	16,560,000
Ասոցիացիայի մնացած անդամների կողմից վճարված գումար (ՀՀ դրամ)	13,339,979
Մնացորդային գումար 2022 թվականից մնացած (ՀՀ դրամ)	13,238,429.9
Ելք (ՀՀ դրամ)	36,758,349
Աշխատավարձ և հարկեր	14,335,452
Նախագահ՝ Գուրգեն Գրիգորյան	400,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 147,857
Մամլո խոսնակ՝ Քնարիկ Առաքելյան	200,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 74,000
Հաշվապահ՝ Անուշ Աբովյան	120,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 44,000
Կայքի պատասխանատու՝	75,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ

Քրիստինե Հովհաննիսյան	Հարկ՝ 20,625
Գործավար՝ Նաիրա Խաչիկյան	100,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 37,334
Իրավաբան՝ Նունե Պողոսյան	200,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 75,839

Բանկային ծախսեր	23,600 ՀՀ դրամ
Իրավական տեղեկատվական կենտրոն իրտեկ ՓԲԸ-ի ծառայության վճար	120,000 ՀՀ դրամ
Միջոցառումների կազմակերպման համար տարածքի վարձավճար	1,764,160 ՀՀ դրամ
Իրազեկման անիմացիոն և այլ հոլովակների պատրաստում	1,380,000 ՀՀ դրամ
Վարչական ծախսեր (սգո ծաղկեպսակների ձեռքբերում և հանգանակության տրամադրում)	168,500 ՀՀ դրամ
Ներկայացուցչական ծախսեր (հյուրասիրություններ)	248,010 ՀՀ դրամ
Գովազդ (facebook, google)	201,564 ՀՀ դրամ
Գրասենյակային (այցեքարտերի տպագրություն, թղթապանակների տպագրություն, A4 գրքույկների տպագրություն)	281,375 ՀՀ դրամ
Ծրագրային ապահովում, կայքի պատրաստում	1,738,500 ՀՀ դրամ
Համակարգչային տեխնիկական միջոցների ձեռքբերում	574,630 ՀՀ դրամ
Կառուցապատման մասին օրենքի հայեցակարգի մշակման ծառայության վճար	2,526,320 ՀՀ դրամ
Դատական հայց, իրավաբանական ծառայությունների պատվիրում և դրանց դիմաց վճարում	12,125,000 ՀՀ դրամ
Պետական վճարումներ	25,038 ՀՀ դրամ
Խորհրդատվական ծառայությունների պատվիրում՝ սերտիֆիկացման ընթացակարգերի մշակման համար վերջնավճար	1,200,000 ՀՀ դրամ

Հեռահաղորդակցության ծառայությունների վճար	26,670 ՀՀ դրամ

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ	01.01.2024-30.11.2024թ.
Մուտք (ՀՀ դրամ)	29,410,968
Ասոցիացիայի Խորհրդի անդամների կողմից վճարված գումար (ՀՀ դրամ)	13,040,000
Ասոցիացիայի մնացած անդամների կողմից վճարված գումար (ՀՀ դրամ)	16,370,968
Մնացորդային գումար 2023 թվականից մնացած (ՀՀ դրամ)	6,459,898.5
Ելք (ՀՀ դրամ)	28,236,206
Աշխատավարձ և հարկեր	18,933,001
Նախագահ՝ Գուրգեն Գրիգորյան	400,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 147,857
Մամլո խոսնակ՝ Քնարիկ Առաքելյան	200,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 74,000
Հաշվապահ՝ Անուշ Աբովյան	120,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 44,000
Կայքի պատասխանատու՝ Քրիստինե Հովհաննիսյան	75,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 20,625
Գործավար՝ Նաիրա Խաչիկյան	100,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 37,334
Իրավաբան՝ Նունե Պողոսյան	200,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 75,839
Խորհրդատվական ծառայություն՝ Ղուլարյան Արմեն՝ 2024 թ. հուլիսի 09-ից սկսած	390,000 ՀՀ դրամ մաքուր աշխատավարձ Հարկ՝ 104375

Բանկային ծախսեր, միջնորդավճարներ	26,170 ՀՀ դրամ
Իրավական տեղեկատվական կենտրոն իրտեկ ՓԲԸ-ի ծառայության վճար	110,000 ՀՀ դրամ
Միջոցառումների կազմակերպում (Աղվերանում արտագնա, գիշերակացով և հյուրասիրությամբ)	2,972,540 ՀՀ դրամ
Մեդիա արշավի, իրազեկման անիմացիոն և այլ հոլովակների պատրաստում	2,290,000 ՀՀ դրամ

Վարչական ծախսեր (կնիք)	8,000 ՀՀ դրամ
Նվիրաբերություն՝ ավախքին աջակցություն Հիմնադրամին	60,000 ՀՀ դրամ
Ներկայացուցչական ծախսեր (հյուրասիրություններ միջոցառումների ժամանակ և գործընկերների հետ հանդիպումների ընթացքում)	311,340 ՀՀ դրամ
Գովազդ (facebook, google)	286,007 ՀՀ դրամ
Գրասենյակային (այցեքարտերի տպագրություն, թղթապանակների տպագրություն, A4 գրքույկների տպագրություն, դրոշի ձեռքբերում, հայ փոստի վճարումներ)	352,430 ՀՀ դրամ
Ծրագրային ապահովման և կայքի սպասարկման ծառայություններ	385,000 ՀՀ դրամ
Խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ ինժեներական ենթակառուցվածքների գծով	2,200,000 ՀՀ դրամ
Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամավճար	70,000 ՀՀ դրամ
Դիզայնի մշակման ծառայություններ	200,000 ՀՀ դրամ
Հեռահաղորդակցության ծառայությունների վճար	58,718 ՀՀ դրամ